



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման»
ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (ներառյալ օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընդհանրական դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Հերմինե Եղիազարյան

Մանկապարտեզ՝ «Նոր Հաճրնի համայնքապետարանի մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
Գլուխ 1.Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընդհանրական դաստիարակության գործում.....	6
1.1.Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների համագործակցությունը.....	6
1.2.Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների կրթական աշխատանքի կազմակերպումը.....	11
1.3.Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների համագործակցությունը ընդհանրական դաստիարակության գործում.....	13
Գլուխ 2. Սեմինար «Կամակորության վերացման ուղիները».....	17
Եզրակացություն.....	22
Գրականության ցանկ.....	23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխան ունի տեսնելու, մտածելու և զգալու իր առանձնահատուկ ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան դրանք մեր ունակություններով փոխարինելու փորձերը:

Ժան Ժակ Ռուսո

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառի իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ դաստիարակը հնարավորություն է ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, ձեռքբերումների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Հայ ընտանիքը պետք է նոր սերնդին դաստիարակի նոր հոգեբանությամբ՝ նպատակ դնելով նրանցմեջ արմատավորել ազատության և հայրենասիրության գաղափարները, որպեսզի երեխաները կարողանան գնահատել ազգային արժեքները, ազգության պահպանման գործոնները, բարեխղճություն ստանձնած աշխատանքի նկատմամբ, ազնվություն, շիտակություն, արդարամտություն առօրյա փոխհարաբերություններում: Երեխաների դաստիարակությունը կարող է հաջող ընթացք ունենալ միայն այն դեպքում, երբ ծնողները և մանկավարժները պարզ պատկերացնում են դրա նպատակն ու խնդիրները: Ուստի ծնողների և մանկավարժների առջև դրված է մեծ խնդիր՝ երեխաներին սովորեցնել մտածել հայեցի, զարգացնել մայրենի մտածողությունը և խարսխել երեխաների մեջ հայրենասիրությունը:

Ըստ 19 դարի հայ մանկավարժ Սոֆյա Բաբայանի՝ մանկան առաջին հասարակական միջավայրը ընտանիքն է, որտեղ սկզբնավորվում է նրա բազմակողմանի զարգացումը, իսկ Րաֆֆու բնութագրմամբ՝ ընտանիքն այն

միջավայրն է, որտեղ երեխայի ուղեղում դրոշմվում են մանկության առաջին տպավորությունները, շրջապատի և՛ լավ, և՛ վատ ազդեցությունները: Քանի որ ամեն մի ծնողի ցանկությունն է, որ երեխան հասունանա մարդկային բոլոր բարձր հատկանիշներով, ուստի ընտանիքին իր բարոյական կենցաղով պետք է բարի օրինակ դառնա և ամուր հիմքը դնի

երեխայի

ճիշտ

դաստիարակության:

Չէ որ իր երեխային լավ մարդ, ապագա քաղաքացի դարձնելու ցանկությունը քիչ է, պետք է կարողանալ նաև այդ անել:

Ղ.Աղայանը նշում է, որ պետք է ծնողները լավ պատկերացնեն, թե ինչպիսի մարդ են ուզում դաստիարակել ինչ հատկանիշներով նրան օժտել:

Յուրաքանչյուր ծնող պետք է իմանա նաև երեխաների դիտողականության զարգացման նշանակությունը:

Այս կապակցությամբ հայ մանկավարժ Առաքել Բահաթրյանն ասել է. «Միայն սեփական փորձը կարող է խելամտացնել երեխաներին»:

Իսկ ով է օգնելու ծնողին, որպեսզի նա փրապետի դաստիարակության արվեստին: Դրանում կարևոր դեր ունեն նախադպրոցական հիմնարկների մանկավարժները: Ընտանիքի հետ նախադպրոցական հիմնարկների աշխատողների գործունեությունը շատ կարևոր և բարդ բնագավառ է:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Արդյունավետ համագործակցության դեպքում ընդհանրապես՝ ծնողները, ակտիվորեն մասնակցում են երեխայի մանկապարտեզային կյանքին: Դրա համար անհրաժեշտ է մանկապարտեզի և ընդհանրի համապատասխանաբար փնտրիչության, դաստիարակների և ծնողների փոխադարձ համաձայնությունը, որից մեծապես շահում են թե՛ երեխան, թե՛ ընդհանրը և թե՛ մանկապարտեզը:

Թեմայի ընդգրկումը պայմանավորված է նրանով, որ խիստ կարևորում են մանկավարժական աշխատողի և սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցչի) համագործակցությունը, որն օգնում է սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընդհանրական դաստիարակության հարցերում խնդիրներ լուծելիս՝ հիմք է դառնում երեխայի հոգեւոցիալական, համակողմանի և ներդաշնակ զարգացման համար, ինչը նախադրոցական մանկավարժության մեջ սահմանվող առաջնահերթություններից է:

Ինչպես ասել է Անտոն մակարենկոն «Ես գրեթե չեմ լսել, որ ծնողներն ասեն. «Մենք պետք է դաստիարակենք, ինչու՞ է մանկապարտեզը խանգարում»: Եվ չեմ լսել, որ մանկավարժն ասի Մենք պետք է դաստիարակենք, ինչու՞ է ընդհանրը խանգարում»:

Առաջին գլխում ընդհանուր ներկայացրել են մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընդհանրական դաստիարակության գործում, երկրորդ գլխում ներկայացրել են ծնողների մասնակցությամբ սեմինարներ:

Գլուխ 1. Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման եւ ընտանեկան դաստիարակության գործում

1.1. Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների համագործակցությունը

Հիմնական խնդիրները և մոտավոր բովանդակությունը նշվում են տարեկան աշխատանքային պլանում:

Աշխատանքն այս ուղղությամբ արդյունավետ կարող է լինել, եթե համակցվեն համագործակցության շարձներ և ներգրավվեն ողջ կոլեկտիվի ու ընտանիքի անդամները:

Մեթոդներն են անկետավորում երեխաների ընդհանուր նպատակային դիտումներ, զրույցներ, այցելություններ:

Ձևերն են՝ խորհրդատվություններ-սովորաբար խորհրդատվությունների համակարգ է կազմվում, որոնք կազմակերպվում են անհատական և ենթախմբերով:

Խմբակայինի ժամանակ կարելի է հրավիրել տարբեր խմբերի ծնողների, որոնք ունեն կամ նույն, կամ հակադարձ պրոբլեմ:

Նման աշխատանքն օգնում է ծնողներին գիտելիք և հմտություն ձեռք բերել, լուծելու պրոբլեմային հարցեր:

Անցկացման ձևերը կարող են լինել քննարկումներ, գործնական պարապմունքները, մասնագետի

հաղորդումները և այլն:

Սա առանձնապես օգտակար կարող է լինել երիտասարդ ծնողներին հոգատարությամբ և զգուշությամբ

գբաղվելու ոչ միայն իրենց երեխաների խնամքով ու առողջությամբ, այլև նրանց հոգևոր աճով, վարպետորեն ու խելացի կազմակերպել երեխաների կենցաղը, գործունեությունը:

Ընդհանրիկ և մանկապարտեզի համատեղ աշխատանքն արդյունավետ կլինի, եթե հենց առաջին ծանոթության ժամանակ, ծնողը, ի դեմս դաստիարակի տեսնի խորապես հետաքրքրասեր, գործիմաց և լավ մարդու: Դաստիարակը պետք է աշխատի գործարար կապ ստեղծել ընդհանրիկ հետ, որպեսզի երիտասարդ ծնողները չկարծեն, թե դաստիարակությունը դյուրին գործ է:

Առաջին հանդիպման ժամանակ հարմար է ծնողներին բաժանել նոթատետրեր: Այն կարելի է ձևավորել հետևյալ կերպ առաջին էջին փակցնել երեխայի նկարչական աշխատանքը, երկրորդ էջին ասույթ ընդհանրիկ վերաբերյալ: Նման մտահղացումը ոչ միայն կշոյի ծնողների արժանապատվությունը, այլև կստիպի կատարել որոշակի գրառումներ դաստիարակության պրոբլեմների շուրջ:

Կարելի է նոթատետրում հատուկ նշումներ կատարել երեխայի արարքների, նրանց սուր, հնարամիտ ու հետաքրքրաշարժ խոսքերի մասին:

Զրույցները կազմակերպվում են անհատական և խմբակային: Երկու դեպքում էլ հստակ նպատակ է դրվում, թե ինչ պետք է բացահայտել, ինչով օգնել:

Դաստիարակը պետք է նաև ծնողին լսել կարողանա: Ծնողների հետ պետք է զրուցել երեխաների բնավորության շատ գծերի մասին: Բացասական երևույթների մասին պետք է զրուցել զգուշորեն: Շատ կարևոր է թե ինչպես է մտադրվում ասելիքը: Զրուցել կարելի է մեղմ, հանգիստ, բայց պահանջկոտ տոնով, այնպես որ համատեղ ջանքերով հաջողության հասնելու հնարներ գտնվեն: Խելացի բանիմաց, աշխատանքը սիրող դաստիարակը գիտի թե ինչպես կարելի է հենվել երեխայի դրական հատկանիշների և ձեռքբերումների վրա ու այդ մասին խոսել ծնողների հետ: Պետք է զրուցի ոչ միայն երեխաների, այլև առօրյա հոգսերի, հասարակական ու մշակութային կյանքի բազմազան իրադրությունների շուրջ:

Երկխոսության ժամանակ հեռավորությունը միմյանցից պետք է չափավոր լինի: Փորձը ցույց է տվել, որ զրուցակիցներից մեկի կանգնած, մյուսի նստած լինելու դեպքում երկխոսությունը երկու րոպեից ավել չի կարող լինել: Ճիշտ է մեծի և երեխայի նստած դիրքը

որպես հավասարը հավասարի: Խոսակցին լսելիս պետք է ուշադիր լինել ձայնի հնչեղությանը ,զգացածի մասին ազատ խոսքին,փորձել հասկանալ լսածի իմաստն ու օգտագործել ակնարկելու ,մտքերը կարդալու մեթոդը:

Ծնողների հետ զրուցելիս կարելի է մասնակից դարձնել ոչ միայն երեխային,այլև նրա սիրելի խաղալիքը:

Ծնողական ժողովները լինում են ընդհանուր և խմբակային: Սրանք ծնողների հետ աշխատանքի ավանդական ձևերն են: Այնքան էլ հեղափոխիչ չի լինում ,երբ հատկապես շեշտադրվում են երեխայի բացասական կողմերը և տրվում նույնատիպ բնութագրումներ:

Պետք է օգտագործել նորաձև ու մտերմիկ հաղորդակցման ձևեր :

Ընդհանուր ժողովները կազմակերպվում են երկուսից երեք անգամ : Քննարկվում են խնդիրներ կապված նոր տարվա ,ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում,ամառային կոփիչ արարողությունների և այլնի հետ: Ընդհանուր ժողովներին կարելի է հրավիրել բժշկի,հրավաբանի,արվեստագետի,մանկագրի:

Խմբակային ժողովները կազմակերպվում են 2-3 ամիսը մեկ անգամ : Քննարկվում է 2-3 հարց (զեկուցում է դաստիարակը ,կարող են հանդես գալ ծնողներ կամ մասնագետներ) : Սարվա ընթացքում մեկ ժողով կարելի է նվիրել ընտանեկան դաստիարակության փորձին:

Բաց դռների օրեր -սա շատ տարածված ձև է: Այն հնարավորություն է տալիս ծանոթանալու մանկապարտեզի ավանդույթների կանոնների, ուսումնադաստիարակչական աշխատանքների առանձնահատկություններին և մասնակցելու ողջ գործընթացին: Կարելի է ցուցադրել երեխաների կոլեկտիվ աշխատանքը,գործունեության որևէ ձև,պարապմունք,միջոցառում,որից հետո դաստիարակը զրուցում է ծնողների հետ,բացահայտում նրանց տպավորությունները,պատասխանում հարցերին:

Այցելություններ ընտանիք-սա շատ տեղեկատվություն կարող է տալ երեխաների մասին,ամրապնդել հաղորդակցումը : դաստիարակը նախապես տեղեկացնում է իր

այցելության նպատակի մասին, գնալ փուն՝ երեխայի մոտ , նշանակում է հյուր գնալ: Այսինքն պետք է ունենալ լավ տրամադրություն , մոռանալ բողոքների մասին, թույլ չփալ դիտողություններ և քննադատություններ, խորհուրդներ փալ զգուշավորությամբ : Այսպես է , որ դաստիարակը նկատում է , թե ինչպիսին է ընտանիքում մանկավարժական մթնոլորտը, և պարզում երեխայի անձնավորության հետ կապված շատ հարցերի պատճառները:

Ծնողական համաժողովների հիմնական նպատակը պետք է լինի ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումը : Նախապես ծնողները դաստիարակի օգնությամբ ընտրում են թեման : Համաժողովի ժամանակ կարող է ելույթ ունենալ մասնագետ: Հարմար է կազմակերպել ցուցահանդես երեխաների կամ մանկավարժների ձեռքի աշխատանքներից , մանկավարժական գրականությունից : Կարելի է համաժողովն ավարտել ընտանիքի անդամների , երեխաների, մանկապարտեզի աշխատակիցների ուժով:

Համագործակցության համեմատաբար թարմ ու մտերմիկ ձևերն են սպորտային միջոցառումները, հարցուպատասխանի երեկոները, մանկավարժական հյուրասրահը, գաղափարների տոնավաճառը, վստահության հեռախոսը, բարի գործերի օրերը, կլոր սեղանը և այլն:

Կլոր սեղան - կերպարվեստակին գործունեության ընթացքում դաստիարակը երեխաների հետ միասին պատրաստում է գեղեցիկ ծրարներ հրավիրատոմսերով, որ ընտանիքի անդամները հրավիրվում են կլոր սեղանի շուրջ՝ նշույով քննարկվող հարցի , խաղերի, մրցույթի ծրագիրը, օրի և ժամը:

Որպեսզի մտքերի փոխանակությունը կատարվի գործարար մթնոլորտում , արժե ծրագրել անգամ մանրուք թվացող հարցերի մասին: Սեղան-աթոռների դասավորությունն այնպես լինի , որ բոլորը տեսնեն իրար:

Դաստիարակը պետք է իմանա մասնակիցների անունները , աշխատի ձգձգել միջոցառումները, 2-3 ծնողի հակիրճ խոսքից հետո արժե համառոտ ընդհանրացում կատարել՝ խոսքը համեմելով խմբի երեխաների կյանքի կոնկրետ օրինակներով, զվարճալի և հետաքրքիր իրադարձություններով:

Մտքերի փոխանակության բանավեճի մնան ձևը հնարավորություն է փալիս ծնդին,բացահայտ արտահայտելու իր կարծիքը : Հայտնի է ,որ նման դեպքերում է ծնվում ճշմարտությունը:

Յուրաքանչյուր քննարկում-բանավեճի վերջում դաստիարակը ծնողներին է փալիս նախապատրաստած հարցեր,որոնք կդառնան հաջորդ հանդիպման նյութ:ՄԱնկապարտեզն այն կրթօջախն է ,որը կոչված է օգնելու ծնողներին ճիշտ դաստարակելու երեխաներին: Այս խնդիրը կարելի է իրագործել միայն այն դեպքում,եր կա փոխադարձ հարգանք,բարիացականություն և վստահություն:

1.2. Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների

կրթական և աշխատանքի կազմակերպում

Սաների կրթական աշխատանքների կազմակերպման հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես կզարգանան մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հարաբերությունները: Իսկ կրթական աշխատանքների կազմակերպման արդյունքը կարող է հաջող լինել, երբ նրանք դառնան համախոհներ: Համագործակցությունը ստեղծում է կրթական միջավայրում ամենակարևոր գործոնները, որոնք պայմանավորում են կրթական ողջ գործընթացի հաջողությունը կամ ձախողումը: Ժամանակակից դժվարին պայմաններում ծնողը կարիք ունի մանկավարժական աշխատողի համակարգված և որակյալ օգնության: Մանկավարժական աշխատողի և ծնողի փոխգործակցության գործընթացն ուղղված է ծնողների ակտիվ ներգրավմանը կրթական գործընթացում, տոնահանդեսների, սպորտընթացների, բաց պարապմունքների նախապատրաստում, համատեղ դիդակտիկ նյութերի պատրաստում և այլն: Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների համագործակցությունը ենթադրում է, որ ծնողները ունեն պատասխանատվություն, իսկ դաստիարակները՝ ընդհանրապես մանկավարժական գործունեություն: Նման համագործակցության հաստատման հիմնական միջոցը կրթական աշխատանքների կազմակերպումն է, որի արդյունքը կլինի նախադպրոցական տարիքի երեխաների երեխայակենտրոն կրթության նպատակների և սկզբունքների իրականացումը: Մանկավարժական աշխատողի և ծնողի համագործակցության կառուցման համար գոյություն ունի մեթոդիկա՝ մի քանի փուլերով:

Առաջին փուլ

«Եկեք ծանոթանանք»։ Ծանոթություն մանկապարտեզի, մանկապարտեզի անձնակազմի, կրթական ծրագրերի հետ: Այն ծնողի առջև կբացի համագործակցային աշխատանքի հնարավորությունները՝ կապված սաների կրթական աշխատանքների կազմակերպման հետ:

Երկրորդ փուլ

«Եկե՛ք բարեկամանանք». այս փուլում ծնողներին առաջարկվում է համագործակցության ակտիվ մեթոդներ՝ թրեյինգներ, կլոր սեղան, սեմինար և այլն:

Երրորդ փուլ

«Եկե՛ք միասին իմանանք». այս փուլում կարելի է խոսել գործառույթների մասին: Ծնողը տեսնում է, թե ինչպես է դաստիարակը ընդունում իր սանին, ինչ աշխատանք է տանում մյուս սաների հետ: Սա միաժամանակ և՛ տեղեկատվություն է, և՛ ուսուցում: Մանկապարտեզի և ընտանիքի համատեղ աշխատանքը հիմնված է հետևյալ հիմնական դրույթների վրա, որոնք որոշում են կրթական աշխատանքի կազմակերպման բովանդակությունը, կազմակերպումը և մեթոդաբանությունը.

✓ միասնություն մանկապարտեզի և ընտանիքի աշխատանքում՝ երեխաների կրթության գործում. այն ձեռք է բերվում, երբ համապարփակ կրթության նպատակներն ու խնդիրները լավ գիտեն և հասկանում են ոչ միայն մանկավարժները, այլև ծնողները, երբ ծնողները ծանոթ են մանկահասակ երեխաների կրթության հիմնական բովանդակությանը, մեթոդներին և որոշակիորեն փորձաքննում են դրանց,

✓ փոխադարձ վստահություն մանկավարժական աշխատողի և ծնողների միջև. նախադարձական փոխադարձ տարիքի երեխաների կրթության վերաբերյալ համատեղ աշխատանքում փոխադարձ օգնություն ու վստահություն:

✓ ծնողների հետ աշխատանքի անհատական և կոլեկտիվ ձևերը լրացնում են միմյաց. դաստիարակի ամենօրյա շփումը երեխայի հոր կամ մոր հետ՝ մեծ հնարավորություններ է ստեղծում անհատական աշխատանքի, ընտանիքմանկապարտեզ հարաբերությունների ամրապնդման համար,

✓ համակարգված, որոշակի պլանի համաձայն, ամբողջ տարվա ընթացքում մանկավարժական աշխատողի և ծնողների միջև համագործակցություն՝ հաշվի առնելով երեխաների հետ կրթական աշխատանքի առաջադրանքները և բովանդակությունը: Ահա նմանատիպ կերպով մենք կարող ենք ապահովել սաների կրթական աշխատանքների կազմակերպման գործընթացը՝ նպաստելով երեխաների կարողունակությունների զարգացմանը:

1.3. Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների համագործակցությունը ընտանեկան դաստիարակության գործում

Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյական դաստիարակման հիմնական օղակն ու վճռական գործոնը:

Ընտանիքից է սկսվում բարոյական դաստիարակման նախահիմքերի կառուցումը, որից հետագայում ձևավորվում և ամրապնդվում են անձի վարքի ձևերը:

Երեխան ծնվելով ընկնում է իր համար բոլորովին նոր վայր, դժվարություններով լի մի աշխարհ, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է: Երեխան աչքերը բացելով, տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել երեխայի կողմից, ազդում են նրա հետագա զարգացման վրա: Առհասարակ, դաստիարակչական ներգործությունների արդյունավետությունը կախված է ծնողների միջև առկա փոխհարաբերություններից, ընտանիքի կյանքի ձևից՝ առողջությունից, նրա երջանիկ մթնոլորտից:

Ընտանիքում են դրվում երեխայի բարոյական, գեղագիտական, փնտեսագիտական դաստիարակման հիմքերը:

Երեխայի համար ընտանիքը պատրաստի օրինակ է սեփական կյանքը կառուցելու համար: Ընտանեկան դաստիարակությունը բնորոշվում է խոր հուզականությամբ և մտերմական բնույթով: Դրա <<ուղեկիցներն են >> զավակների հանդեպ ծնողական սերն ու պատասխան զգացումը: Ընտանեկան դաստիարակության արդյունավետությունը բացատրվում է այն հուզականությամբ, որով շաղախված է ընտանիքի մթնոլորտը; Նման պարագայում երեխաներն իրենց ապահով ու պաշտպանված են զգում: Այստեղ կարելի է ամեն ինչ իմանալ <<ամենագետ >> պապիկից, թաքնվել մայրական տաքուկ գրկում և երջանիկ զգալ:

Նա աչքերը բացելով, տեսնում է իր ընտանիքը, նրա ավանդույթները, հարաբերություններն ու դրվածքները ուստի ճիշտ է այստեղ հիշել այն արտահայտությունը,

թե յուրաքանչյուր երեխա իր ընտանիքի հայելին է և նրա ծնողներն են պատասխանատու երեխայի հետագա ողջ կյանքի համար: Ծնողները շատ դեպքերում կարող են նույնիսկ չնկատել, որ իրենց ամեն խոսքով, վարք ու բարքով օրինակ են ծառայում իրենց երեխաների

համար: Երեխան ամենից առաջ իր ընտանիքում է տեսնում բարության, ուշադրության, քնքշանքի, ծերերի, երեխաների և թույլերի նկատմամբ խղճահարության և փոխօգնության զգացումների արմատները: Երեխան յուրացնում է ընտանեկան ավանդույթներն ու սովորույթները՝ նախապատրաստվում է հետագա

աշխատանքային գործունեությանը: Ընտանեկան միջավայրում են դաստիարակվում այնպիսի սովորույթներ, ինչպիսիք են՝ ինքնասպասարկումը, ինքնակազմակերպումը, պատասխանատվությունը հոգատարությունը:

Ընտանեկան դաստիարակությունը կարող է նպաստել երեխայի մոտ փնտրելիության, հաշվենկատության, ինչպես նաև ինքնուրույնության, անկախության, ինքնասպասարկման կարողությունների ձեռքբերմանը և

երեխայի արագ աճին:

Ինչ կարող են անել ծնողները.

Ժամանակ հատկացնել իրենց երեխային իսկապես ուշադիր նայելու համար: Նկատել հիվանդության, էմոցիոնալ հուզվածության, քաշի ավելացման կամ կորստի, խնամքի պակասի կամ զարգացման փոփոխության հետ կապված նշանները: Ավելի շատ ժամանակ անցկացնել լսելով երեխային: Հարցնեն ամեն ինչի մասին՝ սկսած այն բանից, թե ինչպես են գործերը մանկապարտեզում: Ծիծաղել միասին: Պետք է թույլ տալ, որ երեխան սովորեցնի ծնողին իր պես երեխա լինել, կատակել, զվարճանալ իր ձևով: Աշխատել աշխարհին նայել երեխայի աչքերով: Հիանալ առաջին ծյունով կամ աշնանային տերևների մեջ թավալ գալով: Համբուրել երեխային, գրկել նրան, սեղմել նրա ձեռքը և ասել, որ սիրում եք նրան: Մարդկայի շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակություն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար հանդիսանում է, նախակրթարանը, մանկապարտեզը:

Մանկապարտեզի առօրյան ի տարբերություն ընտանեկան միջավայրի հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, դառնալ ավելի ինքնուրույն:

Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է անհատական զարգացման տեմպով և իր ուրույն ոճով: Երեխաների անհատական առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն նրանց հետ հաղորդակցվելիս և գործունեություն կազմակերպելիս: Երեխաների հետ իրականացվող գործունեությունը պետք է համապատասխանի երեխայի զարգացման հնարավորություններին և խթանի նրանց հետաքրքրությունը,

մտածողությունը: Երեխան սովորում է իրերին ձեռք տալով, դրանք գործածելով, փորձարկելով և շփվելով:

Մանկապարտեզը, պետք է ստեղծի միջավայր, որը պետք է նպաստի երեխայի զարգացմանը: Օրվա գործունեությունը պլանավորելիս պետք է դնել խթանող, երեխաներին խրախուսախաղեր: Դաստիարակը պետք է հետևի երեխաներին, որպեսզի հասկանա, թե ինչն է նրանց հասկանալի, ինչը՝ ոչ: Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը զարգացման բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապակցվածությունն է: Մի ոլորտի առաջընթացի զարգացումը ազդում է մյուս ոլորտների առաջընթացին: Կարևորագույն նախապայմանը խախտված է, երբ շեշտը դրվում է իմացական

զարգացման մյուս ոլորտների նշանակությունը: Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան, անհրաժեշտ է այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ և համապատասխանի նրա զարգացման մակարդակին: Երբ երեխան զգում է, որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ, ավելի հետևողական է կատարում առաջադրանքը և պատրաստ է լինում սովորել ավելին: Մանկական հոգեբանների մեծ մասը միակարծիք են՝ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալիզացման գործում: Երեխայի մոտ սկսվում է կյանքի նոր փուլ, որտեղ ընկերները իրական են:

Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք նա փորձում է ճշտությամբ կատարել: Օրինակ հարդարել անկողինը, դասավորել

խաղալիքները, ուրելուց հետո հավաքել սպասքը, ինքնուրույն հագնվել և այլն: Շատ կարևոր է ծնողների ակտիվ մասնակցությունը մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացում: Այդ համագործակցությունից շահում է, թե՛ երեխան, թե՛ ընտանիքը, և թե՛ ԿԿՄ-ի հաստատությունը:

Եվ իչպես ասել է Ա.Մակարենկոն.

Մեր երեխաները ապագա հայրեր և մայրեր են: Նրանք նույնպես կլինեն իրենց երեխաների դաստիարակները: Երեխաները պետք է մեծանան՝ որպես հիանալի քաղաքացիներ, լավ հայրեր և մայրեր, բայց սա բոլորը չէ. մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակումը մեր երջանիկ ծերությունն է, աղքատ դաստիարակումը մեր ապագա վիշտն է: Սրանք մեր արցունքներն են, սա մեր մեղքն է այլ մարդկանց, ամբողջ երկրի առջև:

Գլուխ 2. Սեմինար<<կամակորության վերացման ուղիները >>

ՆՊԱՏԱԿԸ- Ծնողների հետ ունեցած մշտական հանդիպումների ,զրույցի ընթացքում պարզեցինք, որ ծնողների մեծամասնությունը աշխատում է, որի պատճառով չի կարողանում հնարավորինս շատ ուշադրություն դարձնել երեխային, զբաղվել նրա դաստիարակությամբ: Հաճախ նման գործոնների պատճառով երեխաների վարքագծում նկատվում է կամակորության, անկարգապահության, ագրեսիվության և այլ նշաններ: Հաճախ ծնողները փարբեր պատճառներով դուրս են մղվում այդ հիմնախնդիրների լուծման մասնակցությունից: Նրանք հիմնականում փորձում են պատասխանատվությունը դնել մանկավարժների, հոգեբանների վրա: Ադ նպատակով կազմակերպեցինք սեմինար ,պարզելու թե ինչպիսի փոխհարաբերությունների մեջ են գտնվում ծնողը և երեխան: ԵՎ ինչ մեթոդներ են կիրառում ,երբ երեխայի մոտ նկատվում են կամակորություն և համառություն :

Հանդիպումը անցկացվում է կլոր սեղանի շուրջ:

-Բարև Ձեզ, հարգելի ծնողներ, մենք ուրախ ենք ,որ դուք այստեղ եք, և մեր նպատակն է ,որ Համատեղ իրականացնենք մանկապարտեզի և ընտանիքի գործունեության ծրագիր՝ ուղղված երեխայի դաստիարակությանն ու զարգացմանը, ինչպես նաև կամակորության վերացմանը :

ԿԻՐԱՌԵՑԻՆՔ <<Անավարտ նախադասությունների շարունակությունը >>մեթոդիկան, խնդրեցինք ծնողներին անկեղծ պատասխանել հարցերին:

Հարցաշար ծնողների համար՝

1. Երբ ես մտածում եմ իմ երեխայի մասին.....
- 2.Համեմատաբար իր փարիքի մյուս երեխաների, իմ երեխան.....
3. Ես շատ եմ սիրում, երբ իմ երեխան.....
4. Ես կցանկանայի, որ նա.....
5. Ես անհանգստանում եմ, երբ նա.....

6. Ես կցանկանայի, որ իմ երեխան ավելի մեծ ուշադրություն դարձներ.....
7. Երբ նա մեծանա
8. Իմ երեխային հետաքրքրում է.....
9. Ինձ շատ հաճելի է, երբ ես և իմ երեխան.....
10. Նա չի սիրում, երբ.....
11. Երբ իմ երեխան գալիս է մանկապարտեզ.....
12. Իմ երեխայի մեջ ինձ դուր է գալիս.....
13. Ես վախենում եմ, որ.....
14. Ես չեմ սիրում երբ իմ երեխան
15. Ես կցանկանայի, որ նա դառնար.....
16. Նա շատ է ցանկանում
17. Երբ նա փոքր էր.....
18. Իմ երեխան և ես
19. Իմ երեխայի բնավորության ամենակարևոր գիծն այն է, որ նա.....
20. Իմ երեխան վախենում է, երբ.....
21. Իմ երեխան ուժեղ է.....
22. Ամենադժվարը, որ նա ստիպված է եղել հաղթահարել.....
23. Իմ երեխան փանել չի կարողանում, երբ պատժվում է.....

ԹԵՄԱՅԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երեխան կամակոր կամ անհնազանդ է համարվում, երբ չի ցանկանում ենթարկվել խելամիտ կանոններին և չի արդարացնում ծնողների ակնկալիքները: Այս խնդիրը սովորաբար ծնողների կողմից մասնագիտական օգնության դիմելու ամենից փարածված պատճառն է լինում:

Կամակորություններն իրենց գազաթնակեփին են հասնում 2 փարեկան հասակում, ապա սովորաբար մեղմանում են: Պատանեկության փարիներին երեխաները նույնպես կարող են շատ ժխտող դառնալ:

Մասնագետները երեք տեսակի անհնազանդ կամ կամակոր վարքագիծ են առանձնացնում:

- Երկու տարեկան հասակում երեխան կարող է արձագանքել ձեր պահանջներին՝ անելով ձեր ասածի ճիշտ հակառակը:
- Անհնազանդության երկրորդ տեսակն այն է, երբ երեխան զայրույթի պոռթկում է ունենում կամ ջղայնացած հայտարարում է, որ չի անի ձեր ասածը, և ոչ ոք չի կարող նրան ստիպել:
- Կամակոր վարքի երրորդ տեսակն ընդգրկում է պասիվ դիմադրությունը, որի ընթացքում երեխան նվնվում, բողոքում, խոժոռվում, հապաղում կամ մռայլվում է, երբ նրան ինչ-որ բան են խնդրում անել:

Անհնազանդությունը որոշ չափով նորմալ է համարվում, քանի որ երեխան փորձում է հաստատել իր անկախությունը: Սակայն երբ երեխայի համար օրինաչափ է դառնում կանոնների ու պահանջների մեծ մասը մերժելը, ապա այստեղ արդեն լուրջ խնդիր կա:

Ինչ կարող են անել ծնողները

- Ներգրավեք երեխային կանոնների սահմանման մեջ: Համոզվեք, որ դրանք հստակ են, պարզ շարադրված և լավ հասկացված: Բացի դրանից, զգուշացեք չափից ավելի շատ կանոններ սահմանելուց: Երեխաներից շատերը կաշխատեն ենթարկվել, եթե կանոնները խելամիտ են, սակայն կամակորություն կդրսևորեն, եթե նրանց առաջ չափից ավելի շատ պահանջներ և սահմանափակումներ դրվեն:
- Կանոններ կամ ակնկալիքներ սահմանելիս հաշվի առեք երեխայի զարգացման մակարդակը: Արդյո՞ք դրանք իրատեսական են:
- Փորձեք բացատրել ձեր կանոնները և ակնկալիքները երեխային հենց իր տեսանկյունից: Եթե երեխան կարող է հասկանալ դրանք, ապա շատ լավ: Եթե երեխան չի հասկանում կանոնի իմաստը, ապա պարզապես ասեք, որ մայրիկն այդպես է ճիշտ գտնում և անպայման հետո իրեն կբացատրի այդ արգելքի իմաստը: Կարող են լինել կանոններ, որոնք բոլորիս համար են սահմանված և

երեխան պիտի սովորի, որ որոշ կանոնների իմաստը կարելի է նաև չիմանալ բայց պահել դրանք:

- Երեխայի հետ կապված ձեր ակնկալիքները հաղորդեք փարիկ-պապիկներին, այլ ազգականներին, ուսուցիչներին և դայակներին, որպեսզի նրանք ոչ թե խանգարեն, այլ օգնեն ձեզ՝ միասնական պահանջներ ու ակնկալիքներ դնելով երեխայի առջև:

- Մի դրդեք երեխային հակադրվելու, հատկապես, եթե զգում եք, որ նա հոգնած է կամ գերլարված:

- Կանոնները հնարավորինս ընդհանրական ձևակերպեք, որ երեխային չթվա, թե դրանք հատկապես իրեն են վերաբերում կամ իր համար են հորինված:

- Օգտվեք ոչ բառային մեթոդներից, որոնք կօգնեն երեխային ենթարկվել:

- Դրական ձևակերպում փոխարինե՛ք ձեր պահանջներին: «Մի՛ վազիր» ասելու փոխարեն ասեք, որ արդեն քնելու ժամանակն է:

- Երեխային կանոնները հիշեցնելիս եղեք հանգիստ և գործնական: Պետք չէ ակնկալել երեխայի անհնազանդությունը որպես անձնական վիրավորանք կամ վատ դաստիարակության նշան:

- Պատիժը զանցանքին համապատասխան նշանակեք: Կարիք չկա չափից ավելի կարգուկանոն մտցնել:

- Երբ երեխան կամակորոթյուն է անում, ընդմիջումը երբեմն կարող է օգտակար լինել:

- Ձեր պահանջները երեխային ներկայացրեք հանգիստ, մեղմ տոնով, ոչ թե մի սենյակից մյուսը բղավելով: Իջեք նրա հասակի մակարդակին, նայեք երեխայի աչքերի մեջ՝ համոզվելու համար, որ նա ձեզ լսել է ու հասկացել:

- Հիշեք, որ ձեր նպատակը կատարյալ հնազանդությունը չէ: Մեծերի հեղինակությունը կասկածի փակ առնելը և չափավոր առողջ ինքնավստահությունը ինքնուրույնության նշաններ են:
- Ընդունեք, որ երեխաները փարբեր խառնվածք են ունենում, նրանցից ոմանք կարող են առավել կամակոր լինել, քան մյուսները:

Ծնողների հետ ունեցանք բուռն և նպատակային քնարկում:

Այսպիսով, սիրելի ծնողներ, ավարտելով մեր հանդիպումը, հուսով եմ որ սկզբնական փուլում նախադպրոցական մանկության մեր ներդրումը երեխայի հետագա հաջողության գործում կլինի նրանց կարողությունների բացահայտումն ու զարգացումը: Կարծում եմ, որ միավորելով մեր ուժերը անպայման ցանկալի հաջողությունների կհասնենք:

Սեմինարին ներկա էին նաև տնօրենը և մեթոդիստը: Նրանք եկան հետևյալ եզրակացության.

- Ընդանիքը, մանկապարտեզը պետք է աշխատեն համագործակցված, որպեսզի կարողանան ժամանակին բացահայտեն և զարգացնեն իրենց երեխաների ունակություններն ու կարողությունները, որոնք կարևոր կլինեն նրանց հետագա զարգացման գործընթացում և կխթանեն ապագայում հասարակությանը պիտանի մարդ դաստիարակելու հարցում:

Եզրակացություն

Այսպիսով, ուսումնասիրելով և ներկայացնելով այս թեման, հանգում եմ այն եզրակացության, որ կրթելու և դաստիարակելու հիմքը դրվում է ընտանիքում::

Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված միջոցառումներին, դա ավելի է մտերմացնում պարտեզ- ծնող կապը:

Մանկապարտեզը պետք է աշխատի ծնողների հետ, և հարաբերությունը պետք է լինի բարեկամական- գործընկերային:

Ծնողների հետ անհատական աշխատանքը պետք է զուգահեռվի կոլեկտիվ աշխատանքի հետ: Ծնողների հետ աշխատելիս անհրաժեշտ է բացահայտել, թե երեխան փանը և մանկապարտեզում ինչպես է վերաբերվում աշխատանքին, աշխատելիս կամային որակներ դրսևորում է, թե ոչ:

Իրականում մանկապարտեզը դա սոցիալական հմտությունների ձեռք բերման մի մեծ դպրոց է, որտեղ կան կյանքի փարբեր իրավիճակներ, շփման փարբեր ձևեր, մարդկային բնավորությունների փեսակներ:

Դպրոցը բարեհաջող հաղթահարած երեխաները դառնում են առողջ հասարակության առողջ անդամներ:

Սովորում են բախվել դժվարություններին, հաղթահարել դրանք եւ շարժվել առաջ: Բայց մենք մատաղ սերնդին դաստիարակող մանկավարժներս ,չենք սահմանափակվում այսքանով և դաստիարակության գործընթացը շարունակում ենք իրականացնել մեր աշխատանքի գործունեության յուրաքանչյուր ոլորտում:

Մեր աշխատանքի պտուղները՝ հայրենասեր ,դաստիարակված սերունդներն են ,որոնց շնորհիվ վաղը ամիշտ հայրենիք կունենանք:

Գրականության ցանկ

1. Ասյա Հովհաննիսյան <<ՊԱՐՏԵՁ>> Նախադպրոցական կրթական ծրագիր (5-6 տարեկանների համար) Երևան 2008 էջ 192-195
2. Լ.Միտոյան, Լ.Սմբատյան Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար ,Երևան 2010, էջ 208
3. Ս.Ա. Մարության ,Ա.Մ.Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն ,Երևան 2005 էջ 260
4. Ա.Հովհաննիսյան Նախադպրոցական հաստատության կառավարումը ,Երևան 2008 էջ 163
5. <https://www.babycef.am/hy/positive-parenting/behavioral-issues-disobedienceU>